



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

21

U-88

23 SEP 2000

ՀՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԱԾԸ



ԳՐԵՑ

ՓՐՕՑ. Ֆ. Գ. ՄՕՆՑՕՐԹ

«Կ'արժեցիր թէ ես բարբովին բեգի
կը նմանիմ.» Սաղ. Ծ. 21»

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۳۰ رمضان ۳۲۳ و ۱۴ تشرین ثانی
۳۲۱ تاریخلی و ۴۱۶ و ۱۰۶۹ نومرولی رخصتنامہ سیلہ نشر اولمشدر
مصارف آمریقان مسیوز شرکتی طرفندن تسویہ اولندرق طبع اولمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1905

21
5-88

լով չէին կրնար տեսնել և լսել, և ոչ ալ օգնել իրենց:

Քայլ մը ևս առաջ երթալով իրենց նմանութիւնովը աստուածներ շինեցին և անոնց ծառայութիւն ըրին: Այսպէս երկինքն ու երկիրը լեցուցին այնպիսի աստուածներով ու աստուածուհիներով՝ որոնք ձևով և նմանութիւնով, մտքով ու զգացումով և նպատակով իրենց պէս էին: ԶԱստուած ճանչնալու փափաքով զայն հագուեցուցին այնպիսի ձևերով և անոր ընծայեցին այնպիսի յատկութիւններ՝ որոնք կը յարմարէին իրենց ժամանակին և պարագաներուն: Պատերազմով զբաղող ցեղեր՝ մեծ զինուորականը աստուածութեան աստիճանին բարձրացուցին: Որովհետև պատերազմի կի ձիրքը կատարելութեան նշան կը համարուէր, ուստի այն ցեղերուն աստուածները պատերազմի համար զինեալ պատերազմիկներ էին: Այն ցեղերը որոնք կռիւի մէջ ցուցուած գիւցաղնութենէ և կամ մարմնական ուժէ աւելի լաւ բան մը չէին դիտեր՝ բնականաբար իրենց աստուած պիտի ընտրէին Արէսը և Հէրքուլէսը: Անոնք որ գեղեցկութենէ կատարժէին՝ գեղեցկութիւնը աստուածացուցին և Ափրոդիտէն պաշտեցին: Յոյներուն և Հռոմայեցիներուն աստուածներուն ամէնն ալ աստուածային աստիճանի բարձրացուած մարդիկ էին: Մարդոց մէջ տեսնուած ամէն գեղեցկագոյն բան Աստուծոյ կը վերագրուէր: Իմաստութիւնը, զօրութիւնը, գիտութիւնը և գեղեց-

կութիւնը ու քաղցրութիւնը կը պաշտուէին: Ասկէ զատ մարդոց վրայ երևցած բարութիւն, գթութիւն և ասոնցմէ նուազ ուրիշ յատկութիւններ ալ մնացած միւս աստուածներուն կարգը դասուեցան: Աստուածները մարդոց ոչ թէ ձեռքերուն, այլ անոնց մտքերուն արտագրութիւններն էին: Անոնք կարծեցին թէ մեծ Աստուածը իրենցմէ մէկուն պէս է:

Մարդոց այս գաղափարը իրենց երկրպագութեան մէջ ալ իր ազդեցութիւնը ունեցաւ: Ինչ կերպով որ կը մեծարէին մարդիկը՝ այն նոյն կերպով կը մեծարէին նաև աստուածները, այսինքն անոնց զոհեր կը մատուցանէին և ընծաներ կը նուիրէին, և անոնցմէ օգնութիւն կը խնդրէին այնպիսի կերպերով որոնք մարդոց միայն կ'ազդեն:

Թէև Հրեաները Աստուծոյ ծառայութիւն կը մատուցանէին, սակայն անոր ինչպիսի էակ մը ըլլալուն մասին ուղիղ տեսութիւն չունէին՝ ինչպէս կ'երևի մեր բնաբանէն: Մովսիսական օրէնքին պարտականութիւնները կը կատարէին առանց անոր նշանակութիւնը հասկնալու: Սեղանին վրայ զուարտիկներ և գառներ կը մորթէին, և քիչ ետքը Աստուծոյ և իրարու դէմ կը մեղանչէին: Աստուած յանդիմանելով ասոնք իրենց կուրութեան և չարութեան համար, կ'ըսէ՝ “Ինչ տունէդ զուարակ չեմ առներ, ոչ ալ քու դոմբէդ նոխազներ: Վասն զի իմն են անտառին բոլոր գազանները, հազարաւոր լեռներուն անասունները: Ենոր-

հակալուծիւն զոհէ Սատուծոյ, ու քու ուխտերդ կատարէ Բարձրերոյն:” Սաղ. Ծ. 9, 10, 14:

Այս խօսքերով իբր թէ անոնց ըսել կ'ուզէ: Ես մարդ չեմ որ ձեր չարութեան ընկեր ըլլամ, կամ ընդունիմ ձեր չարութեան պտուղը: Ես Տէր եմ. մաքրութիւնը, արդարութիւնը և ճշմարտութիւնը կը սիրեմ: “Կարծեցիր թէ ես բոլորովին քեզի կը նմանիմ. բայց քեզ պիտի յանդիմանեմ, ու աչքերուդ առջև պիտի շարեմ քու ըրածդ: Ծնորդ հակալուծիւն մատուցանողը զիս կը փառաւորէ. ու իր ճամբուն զգուշացողին պիտի ցուցնեմ Սատուծոյ փրկութիւնը:” Սաղ. Ծ. 21, 23:

Ճշմարիտ երկրպագութեան հիմնական պայմաններէն է Սատուծոյ ստորոգելիքներուն վրայով տեղեկութիւն ունենալ ըստ արժանւոյն: Արդարեւ մենք չենք կրնար Ամենակարողին կատարելութեան վերահասու ըլլալ, սակայն կրնանք արժանանալ անոր հաճելի ըլլալու գիտութիւնը ստանալու՝ կարդալով անոր խօսքը: Անոր խօսքը և ստորոգելիքները որոնք իրարու հետ ներդաշնակ են, և մէկը սորվելու համար միւսը գիտնալ անհրաժեշտ պէտք է մեզի: Իր խորհուրդներուն և իր ճշմարտութեան մեկնիչը ինքն է: Պէտք է որ զինքը ճանչնանք՝ եթէ կ'ուզենք գիտնալ անոր ճշմարտութեան խօսքը այն աստիճանաւ՝ որ պատճառ ըլլայ մեր փրկութեան: Եթէ գործքով և կամ խօսքով կ'ուզենք փառաւորել զինքը, հարկ է որ ճանչնանք անոր կամքը: Կարելի չէ որ փրկա-

րար հաւատք և կամ զՍատուած փառաւորելու ճշմարիտ փառաք գտնուի այնպիսի մարդու մէջ՝ զոր կը ներկայացնեն մեր բնաբանին նախորդ և յետագայ խօսքերը: Այն մարդը որ կը խորհի թէ Սատուած մարդոց պէս անարդար և անողորմ է՝ դեռ չգիտեր ընդունելի երկրպագութեան նախնական պայմանը:

Սատուածաբանութեան հիմը կը կազմեն այն գաղափարները՝ զորս ունինք Սատուծոյ վրայով, և ասկէ գոյն կ'առնեն ամէն մէկ վարդապետութեան մասին մեր ունեցած գաղափարները: Պատկերներու մէջ ինչ համեմատութիւն որ ունին մեծութիւնը և հեռաւորութիւնը աչքերուն՝ ճիշդ նոյն յարաբերութիւնը ունին կրօնական վարդապետութիւններուն հետ՝ Սատուծոյ մասին մեր ունեցած գաղափարները: Գծագրութեան մէջ եթէ յիշեալ համեմատութիւնը ուղիղ է՝ առարկաները բուն իրենց մեծութիւնովը և ձևերովը կ'երևին, եթէ ուղիղ չէ՝ անոնց ձևերը և դիրքերը ծուռ կ'երևին: Այսպէս է նաև Սատուծոյ մասին մեր ունեցած գաղափարը, կրօնական վարդապետութեան ամէն մէկ կէտին վրայով մեր ունեցած հասկցողութեան ուղիղ կամ ծուռ ըլլալը՝ Սատուծոյ վրայով մեր ունեցած գաղափարէն կախեալ է:

Օրինակի համար, կարգ մը մարդիկ ամէն բանէն աւելի Սատուծոյ արդարութեան կարևորութիւն կու տան՝ և գրեթէ չեն տեսներ անոր քաղցր ստորոգելիքները: Այսպիսի-

ներ խիստ և անթոյլատու արդարութիւնը չափէն աւելի կը մեծցընեն՝ ինչպէս հին Յոյները կը մեծցընէին Հէրքուլէսի ոյժը: Անոնց ականջները բաց են Սինա լեռան վրայի որոտուններուն, և անոնց աչքերը՝ լեռան ամպերուն և կայծակներուն: Այս գաղափարը թէև ուղիղ ալ ըլլայ, անկատար է: Այսպիսիներ կը տեսնեն Աստուածային կատարելութեան միայն մէկ կողմը, այսինքն այն կողմը որ մարդուն մէջ կը գտնուի և որուն վրայ իրենք ամենէն աւելի կը հիանան:

Ուրիշ կարգ մը մարդիկ Աստուծոյ մէջ միայն Սէր կը տեսնեն: Շատ մեծ հաճոյք կը զգան Սուրբ Գիրքին այնպիսի համարներէն՝ ինչպէս է “Աստուած սէր է” համարը: Թէև կը հաւատան թէ Աստուած արդար է, սակայն այս ճշմարտութիւնը չեն ուզեր իրենց խորհրդածութեան առարկայ ընել: Որովհետև մեղքի և պատիժի խնդիրները խիստ մութ գոյներով նկարուած են, աւելի փայլուն ու պայծառ էջեր վնասելու համար այդ էջը շուտով կը դարձնեն: Վերոյիշեալ երկու դասակարգի մարդոց պակասութիւնը մէկ է, այսինքն իրենց աստուածը ոչ թէ Սուրբ Գիրքին Աստուածը, այլ իրենց գաղափարներովը կազմուած աստուած է: Թէպէտ և այս մարդիկ Սուրբ Գիրքին կը դիմեն, սակայն զայն այնպէս կը գործածեն՝ ինչպէս կ’ընէ մէկ աչքով հաստատադէտ (ըսթէրիօսքոփ) նայող մարդը: Ասոնք կը մոռնան “Որչափ որ երկինքը

երկրէս բարձր է, այնչափ ալ իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր են, ու իմ խորհուրդներս ձեր խորհուրդներէն” (Ես. ԾԵ. 9) խօսքը, և Սուրբ Գիրքը կը կարդան այն ապակիներով՝ որոնք ներկուած են Աստուծոյ վրայով իրենց հնարած խորհուրդներով:

Այսպիսի մարդոց թերի խորհուրդներուն սխալ հետեանքը՝ Սուրբ Գիրքին ուրիշ վարդապետութիւններուն մասին իրենց տածած խորհուրդներուն մէջ երևան կու գայ: Մէկը քաւութեան վարդապետութիւնը կառավարական դատի մը պէս կը նկատէ, վասն զի այնպէս կը սեպէ թէ՛ օրէնքին ամէն մէկ տառին կատարուելուն մասին Աստուած ֆրիստոսը մարդոց համար իբրև երաշխաւոր բռնած է: Ուրիշ մը՝ մէկու մը ուրիշին տեղը պատիժ կրելու գաղափարը երբեք չկրնար ընդունիլ: Չկրնար ըմբռնել անմեղ մէկու մը պատիժի ենթարկուելու գաղափարը: Եսայիի ԾԳ. գլուխը այլաբանօրէն կը մեկնէ, և խաչը կը սեպէ դաս մը՝ որմէ քանի մը ճշմարտութիւններ պէտք է սորվիլ: Այս երկու կարգի մարդոց ալ դժուարութիւնը հոն է որ՝ կ’աշխատին Սուրբ Գիրքին հետ համաձայնեցընել Աստուծոյ վրայով իրենց ունեցած սխալ մէկ գաղափարը: Շատեր Սուրբ Գիրքին մէջ ուսուցուած և եկեղեցիին ալ հաւատացած փոխանորդական քաւութեան վարդապետութիւնը՝ իրենց նմանութեան համեմատ յարմարցուած աստուծոյ մը հնարելիք քաւութեան

համաձայն չգտնելով՝ զայն մերժեցին: Դէպի այս սխալ կողմը քայլ առնողներէն շատեր՝ թէև դէպի շիտակ ճամբան ետ կը դառնան, բայց շատեր ալ այն ճամբուն մէջ շարունակելով անհաւատութեան կը յանգին, վասն զի քիչ մը ետքը կա՛մ Աստուծոյ վրայով ունեցած իրենց սխալ գաղափարէն և կա՛մ Սուրբ Գիրքէն կը հրաժարին:

Ապագայ պատիժի վարդապետութիւնը մերժողներուն համար ալ խրոչութիւնը այս է. վասն զի այս ճշմարտութիւնը Աստուծոյն կատմամբ իրենց ունեցած գաղափարին համաձայն չեն գտներ: Մեր երկնաւոր Հայրը կրնայ իր սէրը այն աստիճան մտնալ որ անհնազանդութեան մէջ գտնուող որդիներէն մէկը յաւիտենական պատիժի ենթարկէ, կ'ըսեն: Անոնց այսպէս ըսելը Աստուծոյ Հայր ըլլալուն մասին ունեցած սխալ գաղափարէն յառաջ կու գայ: Արդարև Աստուած Հայր է, բայց մեզի պէս հայր չէ: Լսել սա ճշմարտութիւնը թէ մեզք պատիժ ունի, դժուար է, իսկ այդ ճշմարտութիւնը հասկնալ ա՛լ ւաւելի դժուար է: Այս մասին Սուրբ Գիրքին լեզուն բացորոշ ըլլալուն համար՝ մարդ պէտք է դիտնայ թէ ո՛րը պիտի ընտրէ. վասն զի իր հին համոզման փակչելով Սուրբ Գիրքը մերժելու սխալը մարդուն իր վնասը ընտրելու սխալն է:

Քրիստոնեաներ երբեմն Նախախնամութեան զարմանալի գործերուն հանդպելով կը շուարին: Ամբարիշտները կը յաջողին և ար-

դարները կը վնասուին: Երբ մարդիկ ջրհեղեղով, կամ կրակով, կամ հիւանդութիւնով և կամ իրենց սիրելիներուն մեռնելովը կը փորձուին՝ կը խորհին թէ Տէրը իրենց թշնամի եղած է, ինչպէս Յոբ խորհեցաւ: Տէրոջը մեզի զրկած պատիժներուն պատճառը ո՞վ կրնայ ըսել: Տէրը իր սիրածը կը խրատէ՝ ըսուած է. և մենք անոր կը հաւատանք, բայց չենք հասկնար: Ինքզինքնիս, կամ մեր մեղքերը և կարօտութիւնները չենք գիտեր: Յոբ ինքզինք «մաքուր և արդար» համարելով՝ խռովեցաւ երբ դժբաղդութեան պատահեցաւ: Բայց այս միևնոյն Յոբն էր որ Աստուծոյ վրայով ուղիղ գաղափար տուող պատգամի արժանանալէն ետքը ըսաւ, «Յիրաւի կը զրուցէի, բայց չէի հասկնար. ինձի սքանչելի բաներ ըլլալով չէի իմանար, բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ: Անոր համար իմ անձս կ'արհամարհեմ, հողի ու մոխրի վրայ կը գղջամ:» Յոբ. ԽԲ. 3, 5, 6:

Փորձութեան ենթարկուած ատեննիս մեր զանգատներուն շատը յառաջ կու գայ Աստուծոյ վրայով մեր սխալ գաղափար ունենալէն: Որովհետև չենք կրնար զանիկա տեսնել ինչպէս որ է, հետևաբար ինքզինքնիս ալ չենք տեսներ ինչպէս որ ենք: Թէ ի՛նչպէս պէտք է ըլլայ անոր նախախնամութեան գործերը՝ մենք մեզի գաղափար մը ձևացուցած ենք. բայց Եղիուսի հարցումը միշտ տեղը կը կենայ. «Արդեօք քու ուզածիդ պէս պիտի հատու-

ցանկ, որ հակառակ կը կենաս:” Յոր. 17. 33: Աստուծոյ խօսքը մեզի ըյս է, և իր նախախնամամութեան մեկնութիւնը հոն կը գտնուի. եթէ երբեք չմեկնէ իր գաղանխքները՝ կը շնորհէ մեզի մխիթարութիւն՝ որ գիտութենէ աւելի լաւ է: “Չիս ստեղծող Աստուածը ո՛ր է, ան որ գիշերուան մէջ երգեր կու տայ:” Յոր. 17. 10: Որքան բարձր է երկինքը երկրէս, այնքան բարձր են Աստուծոյ ստորոգելիքները, փրկութեան տնօրինութիւնը և նախախնամութեան գործերը մարդկայիններէն:

Արդարեւ մարդ ի սկզբան Աստուծոյ պատկերը կը կրէր, բայց այս պատկերը այն աստիճան աւրուեցաւ որ անոր վրայ ա՛լ Աստուած անճանաչելի եղաւ: Ուստի երբ կ’ուզենք զԱստուած հասկնալ՝ պէտք է որ ուրիշ տեղ փնտռենք զանիկա: Թէպէտեւ արդարութիւն, ողորմութիւն կամ ուրիշ բարձր յատկութիւններ մարդոցմէ ոմանց վրայ կ’երևին, սակայն այս յատկութիւնները որչափ ալ անթերի ըլլան՝ տակաւին Աստուծոյ ստորոգելիքներուն ամէնը չեն: Չենք կրնար ցուցնել մէկը որուն մէջ այս յատկութիւնները կատարելութեան հասած ըլլան, և որուն համար կարող ըլլանք ըսել թէ Աստուած ճիշդ այդպէս է: Մեր տեսած ամենալաւ բաներուն ամէնը մէկտեղ հաւաքելով չենք կրնար ըսել թէ՛ “Ահա Աստուած այսպէս է:” Աստուած մինչև որ ինքզինքը իր գործերուն, խօսքին, և մանաւանդ իր Որդին Յիսուս Քրիստոսի մի-

ջոցաւ չյայտնեց, աշխարհ չկրցաւ զանիկա ճանչնալ և չէր կրնար ալ: Պէտք է որ անոր Յայտնութեան դիմենք, և այս մասին կրնանք օգտուիլ մեզմէ առաջ եկող դացող բարի մարդոց փորձառութենէն: Անոնք մեզի կ’ըսեն, “Աստուած իր անձին, իմաստութեան, զօրութեան, սրբութեան, արդարութեան, բարութեան և ճշմարտութեան տեսակետով անվախճան, յաւիտենական և անփոփոխ Հոգի մըն է:” Կարելի է գործածել մարդկային տարբեր լեզու մը որ մեր բնաբանին մէջ պարունակուած իմաստը յայտնէ ասկէ աւելի զօրաւոր կերպով: Մեր բնաբանին ավէն մէկ բառին մէջ կ’երևի այն տարբերութիւնը որ կայ Սուրբ Գիրքին յայտնած Աստուծոյն և մարդոց հնարած աստուծոյն մէջտեղ: Մարդ ոչ թէ անհուն՝ այլ հունաւոր, ոչ թէ յաւիտենական՝ այլ երէկուան արարած մըն է. փոփոխութենէ զերծ չէ: Ամենակատարեալ Աստուածը զոր մենք կրնանք շինել մեր նմանութեան համեմատ՝ մասնակից պիտի գտնուի մեր հունաւոր և անորոշ բնութեան. բայց Աստուած իր անձին և իր ստորոգելիքներուն տեսակետով նոյն է “երէկ, այսօր և յաւիտեան:” “Դուն Աստուած ես սկիզբէն մինչև վերջը:”

Աստուծոյ ստորոգելիքները ուսումնասիրելու լաւագոյն ճամբան ֆրիստոսի կեանքը ուսումնասիրելն է վասն զի “Անիկա իր փառացը ըյսն է, և իր էութեանը բուն պատկերը:” Եբբ. Ա. 3: Փիլիպպոս ըսաւ անոր,

“Տէր, Հայրը մեզի ցուցուր, ու հերիք է մեզի: Յիսուս ըսաւ անոր, Այսքան ժամանակ ձեզի հետ եմ, և զիս չճանչցա՞ր: Փրիւպպոս, ան որ զիս տեսաւ՝ Հայրը տեսաւ:” Յովհ. ԺԴ. 8, 9: Յիսուսի քով զրկուած պաշտօնեաները իրաւունք ունէին երբ ըսին թէ՛ “Երբեք մէկը այս մարդուն պէս խօսած չէ.” վասն զի Յիսուսէ առաջ ոչ մէկը անոր չափ արժանացած էր Աստուածային իմաստութեան: Քրիստոս կը յայտնէ զԱստուած, և անոնք որ կը ճանչնան զանիկա, ահա անոնք կ’ունենան ուղիղ տեսութիւն Հօր Աստուծոյ վրայով:

ՁԱստուած ճանչնալու համար քրիստոսի կեանքը ուսումնասիրել օգտակար է ոչ միայն վարդապետութեան տեսակէտով, այլ արդարութեամբ զարգանալու համար, նաև անոր պատկերին փոխուելու մէջ աճելու մասին շատ կարևոր է: Անիկա մեզի օրինակ է: Ձեզմէ ամէն մէկը այն միտքը թող ունենայ որ քրիստոս Յիսուսի մէջ է: Անոր ստորոգելիքներուն ամէնուն ալ պէտք է որ մենք նմանող ըլլանք: Քրիստոսի պէս սուրբ ըլլալ, արդարութիւն, ողորմութիւն և ուրիշ յատկութիւններ ունենալու մէջ անոր նմանող ըլլալ Աստուծոյ նմանող ըլլալ է: Աստուծոյ ծառայութիւն մատուցանել քրիստոսի օրինակին հետևիլ է: Քալել ինչպէս որ անիկա քալեց, մեզի թէ՛ պարտականութիւն և թէ՛ արտօնութիւն է:

Հաւատալով թէ մեր կարօտութիւններուն

համար պէտք եղած շնորհքը մեզի պիտի տրուի՝ կրնանք այս ճամբուն մէջ քալել: Թէև անիկա ճիշդ մեզի պէս չէ՛ բայց խոստացուած է մեզի թէ՛ “անոր պէս պիտի ըլլանք.” այնպէս որ Աղամին ինչալովը կորսուած Աստուածային պատկերը պիտի վերադարձուի մեզի Գրիստոսի միջոցաւ: Թէև չենք կրնար անմիջապէս այս պատկերին հասնիլ, բայց այս պէտք չէ որ յուսահատութեան պատճառ ըլլայ մեզի: Եթէ գծագրիչ մը ձեռնարկէ ընդօրինակելու պատկեր մը՝ որ իր կարողութենէն վեր երևնայ՝ պէտք է որ յուսահատի այս պատճառաւ. վարդը կատարեալ ըլլալուն համար պէտք է որ գծագրիչը չձեռնարկէ անոր պատկերը գծելու: Ոչ մէկ նետ կրնայ իր նպատակակէտին հասնիլ՝ մինչև որ չգծէ զուգահեռական գիծ մը, և այն նետը, որուն ծայրը գէպի վեր կը նայի, աւելի ճամբայ կը կտրէ քան այն՝ որ հորիզոնական ուղղութեամբ նետուած է: Այսպէս ալ այն մարդը, որ իր խորհրդածութեան նիւթ կ’ընէ Աստուծոյ կատարեալ և անթերի ստորոգելիքները, ոչ միայն կը հասնի աւելի փառաւոր վախճաններու, այլ կը քաջալերուի այն հաւատքովը թէ՛ յառաջիկային իր գիտութիւնը և նմանութիւնը կատարելութեան պիտի հասնին: “Անոր պէս պիտի ըլլանք, վասն զի զանիկա պիտի տեսնենք ինչպէս որ է:”

Աստուծոյ փառաւոր ստորոգելիքները այս կեանքին մէջ, շատ շատ, միայն աստիճան մը

Կը հասկցուն, ինչպէս նաև արդարութեան
 վարձատրութիւնը և մեղքին պատիժը շատ
 քիչ կը հասկցուն: Պէտք չէ որ սխալմունքի
 տեղի տանք դրախտը մեր գաղափարին եւ փա-
 փաքին համեմատ կարծելով կամ ձևացնելով:
 Պէտք չէ որ խաբուինք այն այլաբանութիւննե-
 րէն՝ որոնք գործածուած են դրախտը մեր հու-
 նաւոր միտքին ըստ կարի հասկցնելու համար:
 Ապակեղէն ծովը, ոսկի փողոցը, մարգարտ-
 եայ դռները, կենաց ծառը և շուրը ուրիշ բան
 չեն՝ եթէ ոչ միայն տկար այլաբանութիւններ
 այն գեղեցկութեան և փառքին, զոր կարելի
 չէ նկարագրել: Այն փառքը որ յաղթահա-
 րեց երեք աշակերտները Այլակերպութեան
 լեռան վրայ, և որուն հետեանօք մեռածի պէս
 ինկաւ Յովհաննէս Պատմոս կղզիին մէջ, չկը-
 նար նկարագրուիլ մարդկային լեզուով: Նմա-
 նապէս կարելի չէ նկարագրել այն չարիքնե-
 րը և թշուառութիւնները յաւիտենականու-
 թեան՝ ուր կը դիմեն անապաշխար մեղաւոր-
 ները: Պէտք չէ որ սխալ հասկնանք կրակ, որդ-
 և կրակով ու ծծումբով վառած լիճ ասաց-
 ուածները, ասոնք չեն նմանիր երկրի դժոխքնե-
 րուն, վասն զի ինչպէս որ երկինքը բարձր է
 երկրէս, և Աստուած մեծ է քան ինչ որ մենք
 կը կարծենք՝ այնպէս ալ դրախտը շատ փառա-
 ւոր է քան ինչ որ կրնայ մարդ երևակայել, ու
 դժոխքը, աւելի սոսկալի է քան ինչ որ մարդ
 կը տեսնէ և զիտէ: Զանանք՝ մէկուն ցան-
 կալ և միւսէն հեռանալ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0160319

